

ներով, նալ պահեցին, ուստի շփոթեցաւ յօգուածը. եւ յայսմ զկալուածի երբեմն պատահեցաւ որ «կարծեօք ունեւով, ը՛ կարծիս ունեւովի փոխուեցաւ: Ասանկ է Ներսիսի Ամբրոնացւոյ Պատարագամատուցին մէջն բնագիրը, եւ Վ կենտիկի վանքին ձեռագրաց մէջ երկաթագիր մատենինը 1284ին գրուած (Ժմբք. ԻԲ): Բնական է որ «էառ, ը գեռ Ներսիսի Շինողի Թղթոյն մէջ չգտնուի 7^{րդ} դարուն. բայց արդէն Խոսրովայ քով 9^{րդ} դարուն, եւ 1342ին ըստին Թարգմանութեան, մէջ կը կարգանք եստ՝ առանց ունեւովի: — Խոսրով «կարծեօք, ը՛ յաջորդ խօսքին տալով կըսէ. «եւ ոչ կարծեօք չարչարեցաւ, եւն:

10. Չարչարեալ, խաշեալ, Թաղեալ:

Ար գտնուին գրչագիրք՝ որոնք «Թաղեալ, էն առաջ կաւելչընեն մտնալ². սակայն յոյնը չունի: Անոր համար յոյնը «չարչարեալ, էն ետքը անմիջապէս կը յարէ՝ այս ինքն. որովհետեւ հոս ալ Նիկիոյ հանգանակին «չարչարեալ, էն յաւելուած կամ մեկնութիւն մը վրայ կու գայ՝ խաշեալ, Թաղեալ՝ որոնք Նիկիականին մէջ չկան: Հոս ընտիր հայ գրչագիրները սոյն «այս ինքն, մասնիկը պահած են: Այս կարգէն է Փէշախմալճեանին իրեն առաջնորդ ընտրած օրինակը, նոյնպէս Ներսիսի Պ. ի օրինակը, նոյնպէս վերջիշեալ Վ կենտիկոյ ԻԲ. Ժամագրոց օրինակը. եւ վերջապէս Վ իեննայի կայսերական եւ Թաղաւորական մատենադարանին 19երորդը (էջ 106) եւ 14երորդը (էջ 59): Սակայն արդէն, Ամբրոնացւոյն դարուն ասոր զանցառութիւնը հասարակ եղած պիտոր ըլլայ:

11. Ելեալ յերկինս նովին մարմնովն:

«Ալեալ յերկինս նովին մարմնովն, էն քով կայ յոյն բնագրին մէջ նաեւ միսոսօր կամ միսոսապոսթեամբ: Զեռագիրներէն ասիկայ չենք գտներ. սակայն Ամբրոնացին իր առջեւի օրինակին մէջ նոյնն ունեցած է: Իսկ յետագայ «եւ փառօք Հօր, ը յոյն բնագրին մէջ պարզապէս «փառօք, է: Ասանկ եղած է նախնաբար հայ բնագիրն ալ, վասն զի 6^{րդ} դարուն առաջին կէսին մէջ Ներսէս Բ.³ եւ Ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոս⁴ առ Ասորիս գրած Թղթոյն մէջ սոյն հանգանակին մէկ հատուածն

¹ Մեկն. Ժմբք. էջ 179:

² Ասանկ մեր Վ իեն. մատենադարանին ԹԻԼ 97 ձեռագիրը. Վ իեննայի, կայս. - Թգր. մատենագ. Cod. Arm. 19, էջ 106:

³ Պեռ. 555ին կենդանի: Այս յայտնի է Հեղինակին գտած մէկ գրութեանէն, որ է «Ուխտ միարանութեան Հայոց

աշխարհիս ընդդէմ՝ խուժկայ կամ՝ Նեատորականաց, ի ձեռն Ներսիսի Հայոց կաթ. եւ Ներշապհայ Մամիկոնէից եպոս. եւ Պետրոսի Սիւնեաց եպոս. եւն. որուն մէջ Խոսրովայ արքայից արքայի քսանուչորրորդ տարին (որ է 854-5) նշանակուած է այս գրութեան ժամանակը: Ծ. Հրառ.:

⁴ Այս սոյն Ներշապուհն է որ Բաբ-